Carm IV

№ 1. Յունվարի 4. — 1873 — Յունվարի 4. № 1.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի գիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Redакцію Армянской Газеты „Мшакъ".

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Սրծրունու առուն և Պատուրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԻՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Փոքանաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Ա՛յս 1873 թ. „Մշակը" կը հրատարակվի մի և նոյն պրոգրամմայով:

I. Տէրութեան կարգադրութիւններ:

II. Դատաստանական ժամանակագրութիւն. կարգից դուրս նշանաւոր պրոցէսների կարճ տեղեկութիւններ:

III. Ներքին տեսութիւն. ամենանշանաւոր ժամանակակից երևոյթները մեր Հայրենիքի կեանքում:

IV. Արտաքին տեսութիւն. տեղեկութիւններ քաղաքական արդեան կեանքի ընթացքի օտար պետութիւնների մէջ, նամանաւանդ նոցա կենսական երևոյթների, քաղված թէ ռուսական, թէ այն ամեն արտաստամանեան պարբերական հրատարակութիւններից, որոնք կայսերութեան սահմաններում թոյլ են տուած:

V. Բանասիրական և զանազան յօդվածները (ինքնուրոյն և թարգմանական) գիտութիւնների զանազան ճիւղերից:

VI. Մատենագրութիւն հայկական, ռուսական և քանի մի օտար լեզուներով հրատարակվող գրքերի քննադատութիւններ:

VII. Ֆէլիէտօն.

VIII. Առևտրական ժամանակագրութիւն:

IX. Յայտարարութիւններ:

„Մշակը" կը հրատարակվի շաբաթը մի անգամ 1 մինչև 2 թերթ փոքր դրքի: Տարեկան բաժանորդութեան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցանուցումն։—Ինչ ենք արել և ինչպէսք է անենք։—Ներքին տեսութիւն։ Թարգմանական գրվածները բեմի վրա։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Ազուլիսից։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա. Գերմանիա։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ա՛յս համարը ուղարկվում է Թիֆլիսի անցեալ տարվայ բոլոր բաժանորդներին: Ով որ ցանկանում է այս տարի ստանալ „Մշակ" լրագիրը, թող շուտով յայտնի:

„Մշակ" լրագրի 2-որդ համարը տօների պատճառով դուրս կը գայ միայն յունվարի 18-ին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը, Մ. Մ. Միանսարեանց։ Ս.-Պետերբուրգ, 1872, գինն է 1 ռ. 70 կոպ.

Մանկական Աշխարհ, Ա և Բ մասն, թարգմանութիւն Կ. Տէր Դաւթեանց։ Թիֆլիս։

—

„Արարատ" ամսագրի 6-րդ համարում մի „կրիտիկոս" մեղադրում է մեզ մեր մատենագրական նկատողութիւնների համար, ասելով թէ նոքա լոկ մանրացուցութիւններ են և ոչ հիմնաւոր քննութիւններ։ Այս մեղադրանքը արդարացի կը լիներ, եթէ մեր դիտաւորութիւնը եղած չլիներ ժամանակ առ ժամանակ ներկայացնել միայն մի „լոկ հաչիւ" մեզանում հրատարակուած գրքերի վերայ, յայտնելով նոցա գլխաւոր արժանաւորութիւնները ու թերութիւնները, ինչպէս որ մենք հանկանում ենք։ Այլապէս չենք էլ կարող վարուել։ „Մշակի" էջերը այնքան նեղ և շրջափակուած են, իսկ նիւթերի կողմից այնքան բազմակողմանի, որ եթէ հանդամանքներին չենթարկուելով մեր գրչին ու ցանկութեանը կատարեալ ազատութիւն տայինք, կը սխալուէինք մի և նոյն նիւթերի վրայ մի քանի համարում խօսել. բայց սրանով կը մեղանչէինք օրագրականութեան նշանակութեան դէմ ընդհանրապէս և „Մշակի" ուղղութեան դէմ մասնաւորապէս։

—

Վերջին ժամանակներումս լոյս տեսած գրքերի մէջ առանձին մատդրութեան արժանի է Պ. Մ. Միանսարեանցի հրատարակած „Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը"։

Ամբողջ գիրքը բաղկացած է 259 ութածալ երեսներից և պարունակում է իր մէջ իսկապէս տասը գլուխ բան, որ վերաբերում են գրուածքի բուն նիւթին (1—150), հինգ յաւելուած զանազան նիւթերի վրայ (150—248) և վերջապէս մի քանի ուրիշ ծանօթութիւններ (248—259)։

„Հին դարերից սկսած մինչև Պետալոցցիի ժամանակը—ասում է հեղինակը գրուածքի առաջին գլխում—այս գիտութեան (այսինքն վայելչագրութեան) դաստատութեան եղանակը մեքենայական էր։ Ամէն մի աշակերտի տետրակը խազում էին հատարակ խազերով, խազերի սկիզբն ուսուցչը գրում էր տառերը,—այբբենական կարգաւ,—և աշակերտը, միայն նայելով ուսուցչի գրած օրինակին, պիտի աշխատէր մեքենայաբար օրինակել, կամ, առաւել ճիշդ ասել, գուրս նկարել նոյն դասերը այնքան ժամանակ, մինչև որ կարողանար փոքր ի շատէ յարմարացնել ուսուցչի գրած օրինակին։ Այսպիսի նահապետական դրութեան մէջ գտնվում էր և կայ մինչև այսօր ևս վայելուչ և կանոնաւոր գրութեան դաստատութիւնները մեր մէջ" (եր. 4—6)։

Բայց անցեալ դարու վերջերից արդէն Եվրոպայում շատ երևելի մանկավարժներ աշխատեցան վայելչագրութիւնը գիտութեան աստիճանին բարձրացնել, որոշ օրէնքների վրայ հիմնուած, որոնք կարող են հետևեալ հիմնական կանոններին վերածուել. 1. բաժանել և դասաւորել տառերը բընական կերպով, համեմատ այն սկզբնական համանման խազերին, որոնցից բաղկացած են զանազան նոյնաձև գրերը, զոր. ս, ա, ո, ռ. տ, կամ լ. շ. ղ. զ. չ. ջ. կամ ի, խ, ք, ֆ, և այլն։ 2. Համանման տառերի մէջ խազերը միաչափ պահել, թէ գծի վրայ լինեն (ա, ս, ո), թէ գծից բարձր (ն, ծ) կամ ցածր լինեն (լ, ղ)։ 3. Խազերը միակերպ, միաձև թեքել։ 4. Միաչափ լայնութիւն պահել իւրաքանչիւր տառի խազերի մէջ։ 5. Իւրաքանչիւր բառի տառերը մինը միւսից միաչափ հեռաւորութեամբ պահել։ 6. Իւրաքանչիւր բառ իւր նախընթացից և հետևորդից այնքան հեռու գրել, որ ամէն բան որոշակի կարդացուի, այնպէս որ առ հասարակ մի բառի առաջին տառը շատ մօտ չլինի նախընթաց բառին, և վերջին տառը յետագայ բառին։

Այս կանոնները յաջողութեամբ գործադրելու համար մանկավարժները զանազան մէթոդներ մըշակեցին։ Նշանաւոր են այս կողմից Կարստերի, Օգոյիէի, Նիդելինի, Զիլիի, Հակմանի և ուրիշների աշխատութիւնները, որոնց վրայ երկար բարակ խօսում է հեղինակը։

Ինների գլխում պ. Միանսարեանցը հայ գրութեան պատմութիւնն է անում, որի մէջ յիշում է զանազան դարերում հնարուած գրութեան ձևերը սեպագրից ու երկաթագրից սկսած մինչև փառագրին ու փակագիրը։ Այս տեսակ տեսակ ձևերը յայտնի ցոյց են տալիս այն մտքի ճշմարտութիւնը, որ գրութիւնը մինչև նոր ժամանակներս մեր մէջ լոկ իբրև արուեստ մշակուել է և ոչ իբրև գիտութիւն։

Սրանից յետոյ հեղինակը խօսում է այն մէտոդի վրայ որ գործ դրեց իր հրատարակած վայելուչ գրութեան օրինակների մէջ, որոնց համար օգուտ քաղեց զանազան եւրոպական և հայ լեզուներով հրատարակուած վայելչագրութեան օրինակներից։ Թէ գրութեան և թէ տողաչարների տպագրուելու օրինակները պ. Միանսարեանցի տուած գաղափարների վրայից խազեց և գրից վենայի միաբան Հ. Արսէն Այտընեանը։

Գրութեան օրինակները, ինչպէս տեսնում ենք գրքի ցանկից, բաղկանում են հինգ տետրակից։ առաջին տետրակի մէջ գրած են միայն սկզբնական խազերը, կամ գրերի կազմակերպութեան տարրերը, իսկ միւսների մէջ հետզհետէ գրած են զանազան վարժութիւններ, սկսած ամենապարզ խաչը, մէջին և մանր տառերով։ Մեզ մինչև հիմա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ Ա. ԻՄ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3608-66

2013

IIII - Ա. Հ.

թերահաւատութեամբ նայում է ամեն նոր ջանքերի վերա, իր մայրենի լեզվով գրել ու խօսել արհամարհում է, ամեն բան ու ամեն դէպքում կրկնում է ոչինչ չէ կարելի անել,—բայց և առանձին զուարճութիւն է գտնում ամեն նոր, լուսաւոր երևոյթը անտաճանաչութեամբ խեղդելու,—այդ տեսակ դասի հետ ուրիշ ինչ միջոց կարելի է գործ դնել, եթէ ոչ նորա վերա անողորմ կերպով յարձակվել. նորան, ինչպէս մենք ասացինք, մտրակել, նրան այդ վնասակար թմրութենից հանելու համար...: Մտրակով չը խրատես, բան չի դառնայ:—Այդ ուղղութիւնը, այսինքն քննադատական բացասական ուղղութիւնը,—միակ միջոց է քնած ոյժերը զարթեցնելու համար:

Հին սերունդի դէմ ընդհակառակն, նորանից ոչինչ չը սպասելով, որովհետև բնականապէս նրա ժամանակը անցած համարելով,—մենք չենք յարձակվել, այլ աշխատել ենք միայն մեզ պաշպանել նրա մեր ջանքը հերքող հնացած զօրութեան առջև...

Կայ մի երրորդ տարրը այն է ժողովուրդը, որ ծոյլ չէ, աշխատասէր է, բայց անգիտակցաբար աշխատում է իր երեսի քրտինքում, որովհետև մի կողմից չը դիտէ ինչպէս աշխատել, իսկ միւս կողմից իր բոլոր աշխատանքից ինքն օգուտ չէ քաղում:

Այդ տեսակ տարրի դէմ անկարելի է յարձակվել, որովհետև նա անում է բոլոր ինչ որ նորանից կախված է, ինչ որ ներում է նրա նեղ տնտեսական դրութիւնը.....Այդ տարրին հարկաւոր է օգնել ..բայց ինչպէս,—քարոզներով ...ոչ, քարոզները ուրիշներին, այդ գործի մէջ աւելի վարժ մարդիկներին թողնելով, մենք փորձեցինք և պէտք է շարունակենք աշխատող ամբոխին օգնել, դիմելով նոյն ամբոխին, որ նա իր դրութիւնը պարզի, հաղորդելով մեզ իր դրութեան մասին հում, անմշակ նիւթերը, թէ անտեսական թէ բարոյական կողմից:

Մի և նոյն ժամանակ, լաւ դիտենալով, որ աշխատող դասի բարոյական կողմը, մտաւոր զարգացումը անմիջապէս կախումն ունի նրա տնտեսական դրութեան բարելաւութենից, մենք միշտ ուշադրութիւն էինք դարձնում և պիտի դարձնենք գլխաւորապէս տնտեսական խնդիրների վերա...

Ուրեմն հին սերունդը մենք համարում ենք անշնաս, անցաւոր և պէտք է մեր ձայնը նրա դէմ բարձրացնենք միայն այն բոպէներում, երբ ստիպված կը լինենք մեր անձը պաշտպանել:

Նոր, լուսաւորված սերունդը, եթէ նա չը փոխվի մտրակի հարուածների տակ, մենք պիտի միշտ համարենք խաւարասէր և նրա գոյութիւնը ամենամեծագոյն արգելք ժողովրդի կանոնաւոր զարգացման համար:

Ժողովուրդը, ճշմարիտ աշխատող ամբոխը մենք պիտի համարենք մեր գործունէութեան համար վերջնական նպատակ, և նրա տնտեսական դրութիւնը,—բարելաւութեան աղբիւր ամբողջ հայ-հասարակութեան համար:

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՆԵՐԸ ԲԵՄԻ ՎՐԱ

Երբ առաջին անգամ Յունաստանում ծագեց Թատրոնի գաղափարը, դերասանները նկարագրում էին բեմի վերայ ժողովրդի մէջ պատահած մի յանցանք, կրելով իւրանց վերայ յանցաւորի անունը, զգեստը, դիմակը և այլն: Փոքր ինչ յետոյ այդ ձևի անյարմարութիւնը տեսնելով, որոշեցին բեմի վերայ ներկայացնել միայն պատահած դէպքը առանց դիպչելու անձնաւորութեանը: Ուրեմն դեռ հին Յունաստանում Թատրոնի առաջին գաղափարը կայանում էր նորա մէջ, որ կրթողական ազդեցութիւն ունենայ ժողովրդի վերայ հրապարակ հանելով նորա լաւ և վատ կողմերը, նորան յատկանիշ պակասութիւնները և արժանաւորութիւնները: Այդ կազմում է և այսօր Թատրոնի գլխաւոր նշանակութիւնը:

Այս տեսութիւնից ինքն ըստ ինքեան հետևում է, որ մեր ժողովրդի պահանջներին լիապէս կարող են համապատասխանել նորա առօրեայ կեանքից առած պիեսաները: Այդ բանը մի կողմից ապացուցանում է և նոյն իսկ ժողովրդի համակրութիւնը: Նոցանից մի քանիսը (Պեպո, Խաթաբալա և այլն) այնքան գրաւիչ են ժողովրդի համար, որ սա երրորդ, չորրորդ անգամ նոցա տեսնելուց յետոյ և դուրս է գալիս Թատրոնից նոր տպաւորութիւններով, նոր հիացմունքով:

Բայց այսպիսի ինքնուրոյն պիեսաները, որոնք քննում են ժողովրդի մինչև այժմ անյայտ մնացած կողմերը, երևան են հանում նորա մինչև այժմ քօղարկած յատկութիւնները,—այդպիսի պիեսաները սակաւ են մեզանում և շատ շատ երկու—երեք հատ հազիւ են դուրս գալիս ամբողջ տարուայ ընթացքում: Սահմանափակել մեր Թատրոնական բեմը այդ սակաւաթիւ պիեսաների անդադար կրկնութեամբ, կը նշանակէ զրկել նորան կենդանութենից և շինել միջոց ժողովրդին ձանձրացնելու: Եթէ մենք ցանկանում ենք նորա յարատև գոյութիւնը, որ անհրաժեշտ է թէ ժողովրդին կրթելու և ապնուացնելու համար և թէ իբրև միջոց նորան նախապատրաստելու առաւել բարձր օտար պիեսաները ըմբռնելու համար, ուրեմն մենք պէտք է մտցնենք նորա մէջ նոր տարրեր, առաջուց ընտրելով սոցա մէջ աւելի յարմարները:

Պէտք է խոստովանել, որ այդ ընտրութիւնը բաւական բարդ հարց է: Աւելորդ է ասել, որ մեզ համար առանձին խորհուրդ չեն կարող ունենալ այն եւրոպական պիեսաները, որոնք այնքան սերտ կապուած են իւրեանց տեղական կեանքի հետ, որ առանց սորա ծանօթութեան անկարելի է նոցա հասկանալ: Բայց չը պէտք է մոռանալ, որ կան և այնպիսի դրուածներ, որոնք մարդկային հոգու ճիշդ ճանաչողութեամբ կարող են ընդհանուր մարդկութեան սեփականութիւն համարուել (ինչպէս, օրինակի համար՝ Շեկսպիրի, Շիլլերի և այլոց աշխատութիւնները): Առանձնապէս նոյն իսկ „Թուղթ խաղացողի կեանքը", որ վերջին անգամ ներկայացրեց Հայ-դերասանական խումբը: Թէպետ և մենք չենք կարող ասել, որ այդ ախտը մեր մէջ այնպիսի ծայրայեղութեան է հասել, ինչպէս, օրինակի համար, Փարիզում, բայց և չենք կարող բոլորովին հերքել նորա գոյութիւնը: Միւս կողմից այդ պիեսայի մէջ կայ այն ընդհանուր—մարդկային դաղափարը, որ մարդը կուրացած իւր կրքով, զոհելով նորան իւր ընտանեկան, հասարակական և մարդկային պարտականութիւնները հասնում է արդիւքական վախճանի: Հայը կարող է մի այդպիսի երևոյթ ուրիշ յանցանքի վերաբերութեամբ տեսած լինել: Երկու դիպուածքում էս հոգեբանական արտայայտութիւնները մի և նոյն են:—

Միակ անյարմարութիւնը, որ կարող է պատահել եւրոպական ընտիր պիեսաները հայկական բեմի վերայ ներկայացնելու ժամանակ, այդ այն է, որ ամբոխի ճաշակը դեռ էս այնքան զարգացած չէ, որ նա կարողանայ հասկանալ նոցա բոլոր նրբութիւնները և արժանապէս գնահատէ նոցա: Ուրեմն սոցանից հարկաւոր է ընտրել այնպիսիները, որոնք մինչև վերջը կարողանային կապած պահել ժողովրդի զրգռուած ուշադրութիւնը: Պէտք է նկատել, որ այդ պահանջին բոլորովին համապատասխանում էր „Թուղթ խաղացողի կեանքը":

Մեր կեանքից առած պիեսաները շատ գեղեցիկ և օգտակար են, բայց որովհետև նոքա սակաւաթիւ են, ուստի և չը պէտք է հրաժարուել այն դանձերից, որոնք կազմում են ընդհանուր մարդկութեան սեփականութիւնը, ընտրելով սոցանից այնպիսիները, որոնք յարմար լինէին մեր ժողովրդի ճաշակին և հասկացողութեանը և օգտի հետ միասին և զուարճութիւն պատճառէին նորան:

Ն. Լ.

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

„Մշակի 45-որդ համարում կարդացինք մի տեղեկութիւն Պետերբուրգի բժշկական Ակադեմիա մտնելու կանանց քննութիւնների մասին: Այդ տեղեկութիւնը Պետերբուրգի լրագիրներում հրատարակված, որտեղ հաղորդել են կանանց հարցի ջատագովները, չը կամենալով թշնամիներին մի նոր զէնք տալ, ես կաշխատեմ պատմել ձեզ այդ հարցաքննութիւնների մասին հարազատ և գործին աւելի մերձ աղբիւրների վերա հիմնվելով:

Հոկտեմբերի 15-ին սկսվեցան քննութիւնները: Քննվողները 105 էին, առարկաները սոքա էին թուաբանութիւն, երկրաչափութիւնից միմիայն երկրաչափութիւն և հարթաչափութիւն, իսկ ֆիզիկայից մինչև ձայնը: Ֆիզիկայից կամ պատմութիւնից առաջարկվում էին բնաբաններ շարադրութիւն գրելու համար, քննվողը աղաղ էր՝ ընտրել իր բնաբանը կամ ֆիզիկայից (կրկին մինչև ձայնը) կամ պատմութիւնից, շարադրութիւնը նա գրում էր հարցաքննութեան նոյն իսկ դահլիճում, Երկրորդ կամ երրորդ օրը պէտք է պաշտպանէր իր գրվածը, այս մի թեթև ծիսակատարութիւն էր, Սորանից յետոյ հարցաքննում էին թուաբանութիւնից համարեա թէ ըստ մեծի մասին առաջին չորս գործողութիւններն էին հայտնում, բայց մի քանիներից (շատ սակաւներին) հարցնում էին և միւս մասերը: Աշխերքայից միայն մի օրիորդ կամեցաւ քննվել. երկրաչափութիւնից շատ սակաւներին էին քննում: Լեզուներից օրիորդները պարտաւոր էին քննութիւն տալ կամ լատիներէնից, կամ նոր լեզուների մէկից, օրինակ գերմաներէնից:

Քննվողները ինքեանք պատմում էին, որ շատ թեթև էին հարցաքննում, սակայն հետևանքները ոչ այնքան մխիթարիչ եղան: Կային այնպիսիները՝ որք յայտնելով թէ ֆրանսերէնից են կամենում քննվել՝ կարդալ անգամ չը գիտէին այդ լեզվով, կամ թուաբանութեան չորս գործողութիւնից օրինաւոր չը կարողացան պատասխանել: Հարիւր հնդից միմիայն յիսուն և վեց հոգի ընդունվեցան: Ընդունվածների թվում կան երկու հրէուհիք:

Դասախօսութիւնները սկսվեցան նոյեմբերի մէկին:

Ուրեմն եթէ դանվին մեզանում ցանկացող օրիորդները բժշկական ճեմարանը մտնելու, թող չը կարծեն որ հարցաքննութիւնները անչափ դժուար են՝ մի օրիորդ, որ դիտէ կանանց գիմնազիոնի կամ ինստիտուտի աւանդած մատեմատիկան և ֆիզիկան և փոքր ի շատէ նոր լեզուներից մէնը, և կարող է ներկայացնել այդ ուսումնարանից աւարտման մի վկայական, անշուշտ կընդունվէր ճեմարան:

Անցնենք ուրիշ տեղեկութիւններին: Նորերումս տեսայ պ. Միանսարեանի տպագրած օրինակները հայկական գրութեան համար: Ես կարծում եմ որ ամեն հայ պարտական է ձեռնտու լինել որ մեր բանոց մէջ կանոնաւոր գրութիւնը տարածուի:

յաջողուել է միայն երկու տետրակները տեսնել:

Երկու գլխաւոր պակասութիւն ենք նկատում այս աշխատութեան մէջ: Պ. Միանսարեանցը սովորութիւն ունի առհասարակ իւր հրատարակութիւնները զանազան յաւելուածներով ծանրաբեռնել: Լաւ էր եթէ այդ յաւելուածները միշտ կապ ունենային գրուածքի նիւթի հետ. այն ժամանակ ոչինչ մեղադրելու բան չէինք ունենալ: Բայց արի տես որ շատ անգամ հակառակն է պատահում, „Կանոնաւոր և վայելուչ գրութեան" հինգ յաւելուածներից իսկապէս միայն մէնը (զանազան թանաքներ շինելու տարազները) վերաբերում է գրուածքին, որովհետև ինչ յարաբերութիւն կարող է լինել վայելչագրութեան և „անտառների սարպոդական հարկաւորութեան" կամ „անատոմիական ստուերագրերի ու բառարանի" մէջ....

Միւս պակասութիւնն է ծանօթութիւնների չափազանց շատութիւնը, որոնցից ոմանք բոլորովին աւելորդ են: Այսպէս օրինակի համար, ուստի ինչ բառը մեկնելու համար ծանօթութեան մէջ դրած են բոլոր նորա ածանձները ու զանազան ձևերը մինչև քառասուն բառ (եր. 5). գրութեան մէջ թուանամարի գործածութեան վրայ խօսելիս՝ ծանօթութեան մէջ համարեա բոլոր բացարձակ ու դասական թուականները յիշում է, իսկ մի թուականի գրաբառ հոլովումը գնում է (եր. 29), և այլն: Այս յաւելուածները ու ծանօթութիւնները գրքի կէսից աւելի են բռնում:

Առհասարակ պէտք է ասած, որ պ. Միանսարեանցի այս աշխատութիւնը, որքան էլ արժանաւորութիւններ ունենայ, մի անհրաժեշտ երևոյթ չէ մեր աղքատիկ գրականութեան մէջ, որ ուրիշ աւելի մեծ կարօտութիւններ ունի: Մեր կարծիքով աւելի լաւ կը լինէր եթէ հեղինակը աւելի խնայողութեամբ վարուելով՝ բաւականացած լինէր միայն վայելչագրութեան հիմնական կանոնները ամփոփելով գրութեան օրինակների առաջին տետրակի սկզբում, իբրև հրահանգ ուսուցիչների համար: Այդ մեծ թեթևութիւն կը լինէր թէ հասարակութեան և թէ հեղինակի համար, որ հազիւ թէ կարողանայ իր արած ծախքերը ծածկել: Երանի թէ մենք խաբուած լինենք մեր կարծիքի մէջ....

—

Աւելի մեծ մանկավարժական նշանակութիւն ունի Ուշինսկու „Մանկական Աշխարհի" հայկական թարգմանութիւնը, որի երկրորդ հատորը նոր երում հրատարակուեցաւ:

Քիչ գիրք կայ որ պ. Կամսար Տէր Դաւթեանցի այս աշխատութեան չափ յարձակմունքների ենթարկուած և միևնոյն ժամանակ այնքան տարածուած լինի, այնպէս որ առաջին հատորի երկրորդ տպագրութիւնը արդէն սպառվելու վրայ է. ինչ է սորա պատճառը, ընթերցող,—Ընթերցանութեան գրքերի սակաւութիւնը: Այդ ճշմարիտ է, բայց մի ուրիշ աւելի հիմնաւոր պատճառ կայ այստեղ.—Ուշինսկու գրքի պատուականութիւնը մի կողմից և թարգմանութեան խակութիւնը միւսից, բանեցի այս աշխատութիւնը, որքան էլ արժանաւորութիւններ ունենայ, մի անհրաժեշտ երևոյթ չէ մեր աղքատիկ գրականութեան մէջ, որ ուրիշ աւելի մեծ կարօտութիւններ ունի: Մեր կարծիքով աւելի լաւ կը լինէր եթէ հեղինակը աւելի խնայողութեամբ վարուելով՝ բաւականացած լինէր միայն վայելչագրութեան հիմնական կանոնները ամփոփելով գրութեան օրինակների առաջին տետրակի սկզբում, իբրև հրահանգ ուսուցիչների համար: Այդ մեծ թեթևութիւն կը լինէր թէ հասարակութեան և թէ հեղինակի համար, որ հազիւ թէ կարողանայ իր արած ծախքերը ծածկել: Երանի թէ մենք խաբուած լինենք մեր կարծիքի մէջ....

Հին ու ծանօթ ճշմարտութիւն է, որ մի լեզուից միւս լեզվով բան թարգմանելու համար երկու գլխաւոր արժանաւորութիւն է հարկաւոր. առաջին, երկու լեզուների հիմնաւոր ծանօթութիւնը և երկրորդ, թարգմանելի առարկաների հիմնաւոր գիտութիւնը: Այս երկու արժանաւորութիւններից մանաւանդ առաջինի դէմ մեղանչում է պ. Դաւթեանցը: Թարգմանչի ցանկութիւնն է եղել, ինչպէս երևում է, երեխաներին հասկանալի լինելու համար, մի միջին լեզու գործ դնել ժողովրդական ու գրաւոր լեզուների մէջ, ուստի գործ է ածում դաւառական բառեր ու ձևեր խառն գրաւոր լեզուի բառերի ու ձևերի հետ: Սորանից առաջ եկաւ մի անբնական խառնուրդ, մի անհարդաշնակութիւն, այնպէս որ դաւառական կենդանի ձևերն ու բառերը իրանց գեղեցկութիւնը կորցնում են այն բոլոր խառսի մէջ: Այս տպաւորութիւնն է անում ընթերցողի վրայ „Մանկական աշխարհի" ընթերցումը:

Բացի սորանից ուրիշ պակասութիւններ ենք նկատում պ. Տէր Դաւթեանցի աշխատութեան մէջ. օտար բառերի գործածութիւն այնտեղ, ուր համապատասխան բառեր կան հայերէնի մէջ. այսպէս են՝ սանկա, կնեազ, համ...համ և այլն, փոխանակ սահնակ, իշխան, թէ թէ... գործածական բառերի: Դիպանունների տարապայման կրկնութիւնը, ինչպէս այս պարբերութեան մէջ. „Նա հարցրեց Նրանց թէ ինչ են կանչում Նրանց (երևի как их зовутъ), քանի տարեկան են նրանք, կարդալ գրել գիտեն թէ ոչ, Նրանց ծնողները ովք են, Նրանք որտեղ են բնակվում" (ա. 7): Աւելի բնական ու կանոնաւոր կը լինէր ասել հայերէն՝ Նա հարցրեց նրանց անունն ու տարիքը, թէ կարդալ գրել գիտեն թէ ոչ, ծնողները ովք են, որտեղ են բնակվում. Լեզուի հիմնական կանոնների դէմ սխալներ, օրինակի համար՝ „դա այակերպը պէտք է ջանասիրութիւնով տանը դասերը կրկնել, իսկ գրքերը և տետրակները մաքուր և կարգին պահել.... Նա պէտք է քաշքշվի և...մի կտոր հաց խնդրել.—փոխանակ կրկնել պահել խնդրել.—վերջապէս թէ և Ուշինսկու այս աշխատութիւնը ընդհանուր կրթողական բնաւորութիւն ունի, այնու ամենայնիւ կան հատուածներ, որոնց միջից ուսաց կեանքն է արտայայտուած: Պ. Տէր Դաւթեանցը իր տեսակ է մշակում այդպիսի հատուածները: Այսպէս, մի հատուածի մէջ կարդում ենք. „դեկտեմբերի 12-ին գիշերը երեք անգամ երկարանում է օրիցը.... առաւօտեան ժամի 9-ին դեռ էլի մութն է, ճաշից յետոյ ժամի 3-ին արդէն հարկաւոր է ճրագները վառել", և այլն: Աշկարայ է որ այստեղ Ռուսաստանի և մասնաւորապէս Պետերբուրգի ձմեռուայ վրայ է խօսքը: Թարգմանիչը այս հատուածը հայացնելու համար բաւական է համարում վերջումը ռուս բառի տեղ հայ բառը դնել, ասելով. „Որպես է անցկենում հայ մարդու ձմեռուայ կեանքը". Գեղեցիկ մշակութիւն...

Ս. Պ.